Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն)

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/1>>

Պատվիրատուն՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, որը գտնվում է **ք. Երևան, Կորյունի 2** հասցեում, ստորև ներկայացնում է **<<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/1>>** ծածկագրով հայտարարված պարզեցված ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում: <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կողմից հայտարարված <<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի մրցույթի <<Ձեռք բերվող ծառայության նկարագիրը>> կրող խորագրում գրված է հետևյալ պահանջը՝ <<Աշխատակիցը ծառայություն իրականացնելիս պետք է ունենան ծառայողական զենք, ինչի համար պետք է անցած լինի հատուկ ուսուցում և ունենա այն կրելու իրավունք>>:

Խնդրում ենք գրավոր պարզաբանել, թե ինչ նկատի ունեք մրցույթի տեխ. պայմանների մեջ **ծառայողական զենքի** հասկացության պահանջը ներառելով:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 27.01.2017թ.

Պարզաբանում: <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կարիքների համար անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակն է ապահովել հիվանդանոցային համալիրների աշխատողների կյանքի և առողջության պաշտպանությունը հակաիրավական ոտնձգություններից (այդ թվում՝ զենքի գործադրմամբ), ինչպես նաև համալսարանի սեփականության և օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը (խոսքը վերաբերում է համալսարանական <<Հերացի>> թիվ 1 և <<Մուրացան>> հիվանդանոցային համալիրներին): Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ վերջին շրջանում հաճախակիացել են հիվանդանոցային հաստատություններում բժիշկների, իսկ որոշ դեպքերում նաև հիվանդների նկատմամբ սպառնալիքները և ֆիզիկական հաշվեհարդար տեսնելու դեպքերը՝ որոշակի անձանց կողմից, ուստի անհրաժեշտություն է առաջացել անվտանգության և պահնորդական ծառայությունների ձեռքբերումն իրականացնել ծառայողական զենքով:

<<Զենքի մասին>> ՀՀ օրենքի (03.07.1998թ. ՀՕ-246)՝

ա) 4-րդ հոդվածի համաձայն՝

Ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները, որոնց վրա օրենսդրությամբ դրված են այնպիսի գործառույթներ, որոնք կապված են ծառայողական զենք օգտագործելու կամ գործադրելու հետ, համարվում են հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք:

բ) 10-րդ հոդվածի համաձայն՝

Հայաստանի Հանրապետության տարածքում զենք ձեռք բերելու իրավունք ունեն՝ բ) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք.

գ) 12-րդ հոդվածի համաձայն՝

Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձինք իրավունք ունեն մատակարար իրավաբանական անձանցից ձեռք բերել քաղաքացիական և ծառայողական զենք՝ միայն Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից թույլտվություն ստանալուց հետո:

Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական և ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողներին զենքը տրվում է իրավաբանական անձի ղեկավարի գրավոր հրամանով, եթե այդ աշխատողներն անցել են հատուկ պատրաստություն և Հայաստանի Հանրապետության ոստիկանությունից ստացել զենք պահելու ու կրելու թույլտվություն:

<<Մասնավոր պահնորդական գործունեության մասին>> ՀՀ օրենքի (09.02.2012թ. ՀՕ-6-Ն)՝

ա) 1-ին հոդվածի համաձայն՝

2. Հայաստանի Հանրապետության տարածքում թիկնապահական և պահնորդական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեն միայն սույն օրենքով սահմանված կարգով լիցենզիա ստացած իրավաբանական անձինք:

բ) 2-րդ հոդվածի համաձայն՝

- **թիկնապահական և պահնորդական գործունեություն՝** լիցենզավորման ենթակա գործունեություն, որն իրականացվում է պայմանագրային (վճարովի) հիմունքներով, ոչ պետական կազմակերպության կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու նպատակով.

- **պահնորդ՝** պահպանվող օբյեկտների մշտական և ժամանակավոր գտնվելու վայրերի շենքերի, շինությունների, կառույցների, դրանց հարող տարածքների, տրանսպորտային միջոցների պաշտպանություն իրականացնելու համար սույն օրենքով նախատեսված որակավորում ունեցող, թիկնապահական և պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպությունում պայմանագրային հիմունքներով աշխատող և կանոնադրական խնդիրներ իրականացնող ֆիզիկական անձ.

գ) 7-րդ հոդվածի համաձայն՝

1. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնում են տվյալ գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձինք՝ սույն օրենքով նախատեսված թիկնապահական և պահնորդական ծառայություններ մատուցելու միջոցով:

2. Թիկնապահական և պահնորդական գործունեությունն իրականացնելիս կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

1) ֆիզիկական անձի կյանքի և առողջության պաշտպանությունը հակահիրավական ոտնձգություններից (**այդ թվում՝ զենքի օգտագործմամբ**).

2) սեփականության կամ օրինական տիրապետման ներքո գտնվող օբյեկտների, անշարժ և շարժական գույքի, տարածքի պահպանությունը.

3) պահպանվող օբյեկտներում անցագրային և ներօբյեկտային պայմանակարգերի ապահովումը.

4) հատուկ կապի և տրանսպորտային միջոցների տրամադրումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը հայտնում ենք, որ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կողմից հայտարարված <<ԵՊԲՀ-ՊԸԾՁԲ-17/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված ձեռք բերվող ծառայությունների տեխնիկական բնութագրերը կազմված են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին, ինչը հավասար պայմաններ է ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների համար (լիցենզիա՝ ըստ <<Անվտանգության բնագավառ>>-ի հետևյալ ոլորտի՝ <<Մասնավոր պահնորդական գործունեություն>>, ծառայողական զենքի առկայություն), և օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Սույն հատարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **060-621-249:**

Էլ. փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com:**

Պատվիրատու՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**

<<_27_>>_հունվարի_ _2017թ._